ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2026թ. թիվ 536-Ա

Ռ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ
ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշման թիվ 3 հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության» 60-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2026 թվականի հուլիսի 22-ի թիվ 528-Ա որոշումը և հաշվի առնելով Ռ.Վարդանյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սվերդլովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Ռուզաննա Վարդանյանին տրամադրել 2026-2027 թվականների ամենամյա երկարացված արձակուրդի մի մասը 2026թ. օգոստոսի 10-ից 21-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր:

2. Ռ.Վարդանյանի արձակուրդում գտնվելու ընթացքում՝ 2026 թվականի օգոստոսի 10-ից 12-ը ներառյալ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սվերդլովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սվերդլովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Շարմաղ Սուքիասյանին, իսկ 2026 թվականի օգոստոսի 13-ից 21-ը ներառյալ՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սվերդլովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Սյուզաննա Դոլմազյանին:

3. Ռ.Վարդանյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 24-ից:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-07-24 17:33:53 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հուլիսի 24
ք.Վանաձոր